«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>

Դաստիարակ՝ Գոհար Խաչատրյան

Մանկապարտեզ՝ « ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի թիվ 1 «Բողբոջ» » ՀՈԱԿ

2022թ.

Բովանդակություն

Ներածություն.....3
Գլուխ 1.....5
Ազգային տոների կազմակերպումը կրթական գործընթացում.....5
Գլուխ 1.1 6
Սուրբ Զատիկ.....6
Գլուխ 2.....13
Ազգային ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում.....13
Գլուխ 2.1 15
Լավաշթխիկի ծես 15
Եզրակացություն.....18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....19

Ներածություն

Հեթանոսական շրջանում ազգային տոների մեծ մասը նվիրված էր աստվածների և բնության տարբեր տարերքների պաշտամունքին: Չնայած որ քրիստոնեության ընդունումով դրանցից շատերը փոխել են իրենց անվանումն ու խորհուրդը, բայց դրանցում գոյություն ունեցող մի շարք սովորույթներ մինչ օրս էլ պահպանել են իրենց արժեքը: Սակայն, ինչպես անցյաում, այնպես էլ այժմ տոներն ունեն նույն գործառույթը՝ այն է համախմբել մարդկանց տոնի ու ծեսի ազգային գաղափարի շուրջ:

Ծեսն իրենից ներկայացնում է ավանական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն:

Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում բավականին խորն է և բազմակողմանի: Ծեսերի ժամանակ կարևորվում է մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը, քանի որ ներգրավվում է նաև ընտանիքը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ-ընտանիք կապը:

Կարծում եմ շատ հետաքրքիր կլինի ծանոթանալ, ավելի խորքային կերպով ուսումնասիրել մեր ազգային ծեսերը, սովորույթները, ավանդույթները: Սա մի հրաշալի առիթ է նախ մեզ համար՝ ինքներս ճանաչելու մեր ազգայինը, և կիրառելու մեր իմացածը՝ փոքրիկներին ներգրավելով այդ հրաշալի միջավայրի մեջ:

Հետազոտական աշխատանքի թեման է՝ «Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»: Այն կազմված է բովանդակությունից, ներածությունից, գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկի:

Թեմայի նպատակը՝

- Երեխաներին ծանոթացնել ազգային տոներին, ծեսերին, դրանց կազմակերպման առանձնահատկություններին
- Զարգացնել երեխաների մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը, հարստացնել բառապաշարը՝ ծես, տոն, հարյավ խատուտիկ, լիություն բառերով
- Զարգացնել ընտանիք-մանկապարտեզ սերտ համագործակցություն
- Երեխաների մեջ դաստիարակել բարեկիրթ վարվեցողություն, ամրակցել երեխաների հայեցի դաստիարակությունը:

Գլուխ 1

Ազգային տոների կազմակերպումը կրթական գործընթացում

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է նախաքրիստոնեական ժամանակներից:

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ:

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը հայոց լեզուն իմանալու համար:

Մենք մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար: Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները: Ինչ ծավալի էլ լինի միջոցառումը, միևնույնն է, երեխան կամա թե ակամա դառնում է դրանց մասնակիցն ու դիտորդը: Այդ տպավորություններն աստիճանաբար երեխայի մտապատկերում իմաստավորվում են և դառնում տարրական գիտելիքներ շրջապատի ճանաչողական համակարգում:

Փորձը ցույց է տալիս, որ երեխայի գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական, ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային, քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող: Նա արդեն

պատկերացում ունի դրանց վերաբերյալ և մեծ սիրով ու ոգևորությամբ մասնակցում է այդ հանդիսություններին, հաճախ էլ լրացումներով ու հիշեցումներով օգնում դաստիարակին:

Այստեղ փորձել ենք առանձնացնել մի քանի ազգային տոներ, որոնք երկար ճանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիստոնեություն: Այդ տոներից են Սուրբ Զատիկը, Ծաղկազարդը, Տրնդեզը, Ամանորը և այլն:

Առանձնակի հետաքրքրությամբ են անցնում Սուրբ Ծնունդն ու Ամանորը, Զատիկը, Համբարձման տոնը, Վարդավառը: Եթե Սուրբ Ծննդի ու Զատկի տոնակատարությունները մենք տոնում ենք մանկապարտեզում, ապա Համբարձումն ու Վարդավառն անպայման կազմակերպվում են բնության գեղատեսիլ վայրերում: Երեխաներին ուղեկցում, հաճախ էլ միջոցառմանը մասնակից են դառնում տատիկներն ու մայրիկները: Նրանք սիրով և ոգևորությամբ երգում են երեխաների հետ:

Գլուխ 1.1

Սուրբ Զատիկ

Քրիստոնեական տաղավար տոներից մեկը Զատիկը, մանկապարտեզում վերածվում է մի շքեղ հանդիսության: Այն իսկական հայեցի դաստիարակության հրաշալի օրինակ է: Կարևոր է, որ տոնակատարության կազմակերպիչները պահպանեն ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնեն դրա բովանդակությունն ու աստվածային խորհուրդը:

Զատիկը հեթանոսական տոն լինելով, հիմնականում բնորոշում է բնության զարթոնքը բեղմնավորումը: Նոր կյանքի սկիզբը խորհրդանշող ձուն, ինչպես և կենաց ծառը հին հայերը վերագրում էին մեռնող և հարություն առնող բնության աստծուն Արային: Հետագայում այս տոնը քրիստոնեական արժևորվեց և կապվեց Հիսուս Քրիստոսի հարության հետ:

Արդեն երկու հազարամյակ քրիստոնյա աշխարհի մարդիկ Սուրբ Զատկի օրը իրար ավետում են. «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և պատասխանը լինում է. «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Այս տոնակատարությունն իր մեջ ամփոփում է հայկական գեղեցիկ սովորույթներ, կենցաղային ավանդույթներ, անգամ զուտ հայկական ուտեստների պատրաստման և հյուրասիրման տարրեր: Միջոցառման անցկացումը տևում է մեկ շաբաթ: Շաբաթվա ամեն

մի օրը կոչվում է Ավագ և իմաստավորվում կոնկրետ գործով: Վերջնական տոնը բուն զատիկը, կատարվում է շաբաթվա վերջում կիրակի օրը:

Տոնին նախապատրաստվելու համար նախապես երեխաները դաստիարակների օգնությամբ մատուցարանների մեջ ցանում են ցորեն: Դրա կանաչ ծիլերն օգտագործում են սպասք ձևավորելու և ածիկ պատրաստելու համար:

Ավագ երկուշաբթին պատրաստում են զատկի թեմաներով բացիկներ, կոլաժներ, նկարում են նկարներ:

Ավագ երեքշաբթի , զբոսանքի ժամանակ երեխաները մոտակա պուրակից բերում են ուռենու ճյուղեր տոնական զարդարանքների համար:

Ավագ չորեքշաբթի երեխաները մի քյսեի մայրիկների, դաստիարակի և խոհարարի հետ, հետճաշիկից հետո խոհանոցում պատրաստում են հայկական կլոր գաթա, փոխինձ և հալվա:

Ավագ հինգշաբթի՝ հետճաշիկից հետո երեխաները մի քանի տատիկների և խոհարարի օգնությամբ թակիչով ծեծում են ծլած ցորենի ծիլերը, հյութը քամում, խառնում են ալյուրի շփոթին և, դանդաղ խառնելով, եփում են մեր ավանդական, նախատատերի սիրած կերակրատեսակներից մեկը ածիկը:

Ավագ ուրբաթ երեխաները ծնողներից մեկի հրավերով, օրվա երկրորդ կեսին, դաստիարակի ուղեկցությամբ այցելություն են կատարում: Տանը մասնակցում են խնոցի հարելու արարողությանը: Այդ ընթացքում երգում են «Խնոցի, ջան խնոցի»-ն և, ստացված կարագն ու թանը վերցնելով, վերադառնում են մանկապարտեզ:

Ավագ շաբաթ օրը երեխաները ծնողի հրավերով և դաստիարակի ուղեկցությամբ այցելում են հացատուն ու ականատես լինում թոնրի մեջ հացի թխման արարողությանը:

Թե՛մեծերը, թե՛ փոքրերը անհամբերությամբ սպասում են Կիրակի օրվան՝ Զատիկին:

Լսվում է մեղմ եկեղեցական երաժշտություն, և հնչում են հետևյալ խոսքերը:

Բոլոր աշխարհ կբերկրի,
Զատկի զանգակք կհնչեն,
Շուշաններն էլ ցնծումով լի
Գարունը կողջունեն:
Եվ կհնչի զանգակը խոշոր,
Կարձագանքեն լեռ, սար ու ձոր,
Մարդիկ' խայտուն, սիրով ջերմիկ,
Ինչ գեղեցիկ է այս Զատիկ:

Հնչում են եկեղեցու զանգերը, բացվում է վարագույրը, և երևում են երեխաները: Նրանք նստած են սեղանների շուրջը: Դրված են գաթա, հալվա, ածիկ, փոխինդ, գունավոր ձվեր, տապակած կանա- չեղեն, չամչով փլավ (այդ ամենը' կավե ամանների մեջ): Դահլիճի մի անկյունում դրված է մի մեծ, սպիտակ ձու (որի միջից հետագայում դուրս է գալու ճուտիկ-երեխա): Մյուս անկյունում' իղձերի իրականացման ծառն է, որի ճյուղերից կախված են ձվիկներ և գունավոր թաշկինակներ:

Հեղինակ

Բարի լուրի զանգեր զարկին'

Զնգզնգալեն անու՛շ-անո՛ւշ,

Լույսը բացվեց մեր աշխարհին'

Զատկի լուրով անու շ-անու շ:

Անմիջապես դահլիճը լուսավորվում է, և հնչում է «Բարի լուր» երգը:

Երեխա Մեծ Զատիկն է, սուրբ Զատիկը,

Եկե՛ք նշենք այս սուրբ տոնը,

Երբ Հիսուսը նորից ծնվեց

Եվ իր օրհնանքը մեզ տվեց:

Հեղինակ Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից մեկը, որը խորհրդանշել է աշխարհի նորացումն ու բնության զարթոնքը: Ենթադրվում է, որ «Զատիկ» բառը կապվում է տիեզերական արարչագործության հետ և նշանակում է՝ «զատվել», «բաժանվել»: Քրիստոնեության շրջանում այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել են սերմը հողի մեջ թաղելու (մահ) և նրա ծլարձակման (հարություն) հետ: [1]

Նորն է ծնունդ առնում էսպես

Ու շարունակ պտույտ գալիս,

Դա հրաշք է, ուրիշ էլ ի՞նչ:

Եվ անունն է այդ հրաշքի՝

Հարություն կամ կարմիր Զատիկ:

Երգ՝ « Տարվա մեջ ուրախալի»

Երեխա: Հողմը փչեց հարավեն,

Ազատվեցան դաշտք ձյուներեն,

Բերկրություն է ամեն տնոց.

«Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

Առուները խոխոջեցին,

Ծառերն ահա բողբոջեցին,

[1] Լալա Սմբատյան

Օդը լի է ձայնով թռչնոց.

«Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

Քամին սարին շնկշնկաց,

Բարակ անձրև կաթկթաց,

Դալար տերև դողդողաց:

Դռան առաջ հերկեցին,

Դրկցին ողջույն տվեցին,

Հավի ձվեր ներկեցին:

Ուրախ պար

Հեղինակն առաջարկում է հանելուկ.

Ուլուլիկ-պուլուլիկ,

Ոչ դուռ ունի, ոչ՝ երդիկ:

Խումբը՝ Զուն է, ձուն:

- Այո', ձուն է՝ Զատկի խորհրդանիշը:

Երեխա: Տատի, պապի, չալ հավիկ

Ածեց սպիտակ մի ձվիկ,

Ձվիկ չէր այն, այլ հսկա,

Մի մեծ ձվիկ Զատկվա:

Մանուկներն ուրախացան,

Զատկի ձվին մոտ եկան,

Կարմիր, կարմիր ներկեցին,

Ձվի շուրջը պարեցին,

Զատկի տոնը նշեցին:

«Ճոր» երգ - պարձվի շուրջը

Հեղինակ: Այն ի՞նչն է, ինչը,

Շնչավորից անշունչն ելավ,

Անշունչից էլ' շնչավորը:

Խումբը- Զուն է, ձուն:

Հեղինակ: Երեխաներ, այս ի՞նչ ձայն է լսվում:

Պատրաստված մեծ ձվից լսվում է կտկտոց: Ապա այն ջարդվում է, և դուրս է գալիս մի երեխա՝ ճուտիկի հագուստով, և թռչկոտելով մի պտույտ է գործում ձվի շուրջը:

Երեխա

_Խատուտիկ հավիկները

Աձել են այս ձվերը,

Երբ մայրիկը ձուն բերեց,

Տատիկը նախշուն ներկեց:

Ուրախ երգ-պար՝ «Յալալի»

Երեխա:

Կարմիր-կանաչ ձվիկներով

Խաղանք ուրախ ու կռվարար,

Ջա՛ն, ինչ լավ է, որ Զատիկ է,

Սեղաններին շատ ձվիկ է:

Դե, շու՛տ արեք, շու՛տ արեք,

Բոլորդ այստեղ եկե՛ք,

Ձու՛ հասցրեք, շու՛տ բերեք,

Եկե՛ք արագ հավաքվենք,

Մեկս մեկու մենք հաղթենք:

Տոն է այսօր, ուրախություն,

Սեղաններն առատ, լիություն,

Դեղին, կարմիր, կապույտ, կանաչ

Ձվիկներն են մեզ ճանաչ:

Տոնական են սեղանները,

Գաթա, հալվա, չամիչ, փլավ,

Ուտելիքներ շատ համեղ,

Ի՜նչ լավ է, լավ, եկե՛ք այստեղ:

Երգ «Չամչով փլավ»

Երգելու ընթացքում տատիկի ձեռքին՝ սկուտեղի վրա, դրված է չամչով փլավ, որի մեջ ձու է թաքցված:

Տատիկ' Տեսնենք՝ ձուն ում ափսեի մեջ կհայտնվի, ում է ժպտալու բախտը:

Տատիկն ափսեն դնում է նախօրոք սեղանին դրված մյուս ափ- սեների մոտ, և սկսվում է «Գտի'ր ձուն » խաղը:

Խաղից անմիջապես հետո երեխաներին բաժանվում է չամչով փլավ, և սկսվում է ձվով կռվախաղը:

<u>Հեղինակ Մեր պապերն ու մեր տատերը</u>

<u>Պաս են պահել, ձու են ներկել,</u>

Օրհնել են մեծ Զատիկը սրբազան,

Պահպանել են ավանդույթը հայկական:

Եկե'ք մենք էլ պահպանենք մեր հայկական գեղեցիկ ավանդույթները: Ձեր Զատիկն էլ շնորհավոր լինի:

«Քրիստոս հարյավ ի մեռելոց,

Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:[2]

Զատկի տոնակատարությունը սրտամոտ է երեխաներին: Այն հայեցի դաստիարակության և կրթության, գեղագիտական, բարոյական, ինչու չէ, նաև պատմական անցյալը իմանալու, գնահատելու և սովորելու տեսակետից, հրաշալի դասեր են և հարստացնում են մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխարհը:

[2] Լալա Սմբատյան

Գլուխ 2

Ազգային ծեսերի կազմակերպումը կրթական գործընթացում

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր

երեխան ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին,

սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերը,

երեխան երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները,

ծիսակարգը ուսումնասիրելիս ծանոթանում է տարածաշրջանային առանձնահատկություններին,

արդյունքում վերականգնվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով:

Մշակույթը չէր պահպանվի, և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ, որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ:

Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Հայ եկեղեցին ծեսը սահմանում է որպես աղոթքի կարգ, որն ունի կարգավորված և ներդաշնակ նկարագիր:

Հայոց եկեղեցում ծեսերը հաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները համաձայն Աստվածաշնչյան մեկնություններ և քրիստոնեական դավանության: Այդ գործում մեծ ներդրում են ունեցել Գրիգոր Լուսավորիչ և Ներսես Մեծ կաթողիկոսները:

Եկեղեցական ծիսակարգում հնագույն ծեսերը ներկայացված են բովանդակային-տիպային հետևյալ կառուցվածքով.

1. Ծեսեր, որոնք վերաբերում են կյանքի հիմնական հանգուցակետերին (մկրտություն,

պսակ, թաղում-և այլն):

2. Ջրի պաշտամունքի հետ կապված ծեսեր (ջրօրհնեք, խաչալվա, ոտնլվա, ջրհորի օրհնություն և այլն):
3. Երկրագործության (բուսականություն) և պտղաբերության պաշտամունքից բխող ծեսեր (սերմ,կալ,հնձան,անդաստան,խաղողօրհնեք)
4. Ընտանիքի պաշտամունքի օրհնություններ (տան,ընտանիքի,սեղանի,աղի, և այլն):

Սակայն հետաքրքիր է, որ քրիստոնեական ծիսաբանական ժողովածուում տեղ էին գտել նաև սկզբնապես հմայական և ոգեկոչման գործողությունների հետ կապված ծեսերի հետևյալ խումբը.

5. Դիվահար լուսնոտի, դժվարածին կնոջ վրա, երաշտի դեմ կարդացվող աղոթքներ, մատաղի և հացի օրհնություններ և այլն:

Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսերը ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները: Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ:

Ծեսը եկեղեցու կյանքի մեջ առանցքային տեղ ունի: Այն արտահայտում է եկեղեցու աստվածաբանական մտածողությունը և դավանաբանական կեցվածքը քրիստոնեական հավատքին առնչվող հարցերի և երևույթների մասին:

Ծեսով և ծիսակատարությամբ մարդկային հոգևոր աշխարհը խաղաղություն է գտնում: Դրանք Աստծուն պաշտելու հիմնական այն միջոցներն են, որ հավատացյալը աղոթքով, երգեցողությամբ, մոմավառությամբ և խնկարկությամբ ինքստիքյան գնում է դեպի Աստված և իր ներքին զգացումները սրտաբուխ խնդրանքներով ընծայում է Աստծուն:

Գլուխ 2.1

Լավաշթխիկի ծես

Հացն իր զորությամբ դարեր շարունակ եղել է հայերի հավատարիմ ուղեկիցը: Հայկական լեռնաշխարհում հաց թխել են դեռևս Ք.ա. 3-2 հազարամյակներում: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են անգամ 4-րդ և 3-րդ հազարամյակներին թվագրվող ցորենի և գարու հսկայական պաշարներ: Հնագետները պնդում են, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում, դեռ շատ վաղուց մարդիկ սկսել են զբաղվել երկրագործությամբ և ընտելացրել հաճար և կարծր ցորեն: Այստեղից պարզ է դառնում, որ հնում հայերն այս հացահատիկներն աճեցրել են ալյուր ստանալու, իսկ այնուհետև հաց կամ հայկական լավաշ թխելու նպատակով: Հայերը հացահատիկը պահում էին տարբեր տեսակի ամբարներում, շտեմարաններում, կարասներում և հատուկ հացահատիկի համար նախատեսված գետնափոր հորերում:

Գյուղացիները հացահատիկի բերքը հավաքելուց հետո չէին շտապում այն անմիջապես ալրաղաց տանել: Հնում առաջին բերքը միշտ տարվում էր եկեղեցի և այնտեղ օրհնվում: Միայն դրանից հետո գյուղացին կարող էր իր բերքը հավաքել և տանել ալրաղաց, աղալ և հետագայում հաց թխել: Սակայն բերքը օրհնության տանելիս այն պարզապես փնջած չէին տանում: Օրհնության տանելուց առաջ պատրաստում էին խաչբուռներ: Դրանք պատրաստելու համար հասկերին խաչի, հավերժության կեռխաչի կամ կենաց ծառի տեսք էին տալիս: Կենաց ծառն ինքնին հանդիսանում էր պտղաբերության, կյանքի սկզբի և հարատևության խորհրդանիշ:

Բացի պարզապես հաց լինելուց, լավաշը հայերի կյանքում հանդիսանում է կրոնածիսական և պաշտամունքային նշանակություն ունեցող մշակութային տարր: Նախ եկեք հասկանանք, թե որտեղից է առաջացել հացի «լավաշ» անվանումը: Լավաշը հայկական բառ է, որն առաջացել է հենց այն պատրաստելու գործընթացից: Խմորը գրտնակելուց հետո այն լավ քաշել և բացել են: Այստեղից էլ առաջացել է լավ քաշած, լավ քաշ, իսկ հետո էլ արդեն լավաշ անվանումը:

Ըստ ավանդության հաց թխելու արարողությունը կատարվում էր վաղ առավոտյան, իսկ կրակը թոնրում վառվում էր դեռ արևածագին: Իսկ հաց թխելու գործընթացն ուղեկցվում էր բարի լույսի օրհնանքներով և աղոթքներով: Հնում լավաշը թխել են տոնից տոն և մեծ քանակությամբ: Այս գործընթացը հաճախ տևել է մեկ կամ անգամ երկու օր: Եղել են նաև

հատուկ երգեր, որոնք կատարվել են լավաշ թխելու ժամանակ և որոնց միջոցով գովերգել են լավաշի համը:

Ավանդական կենցաղում հաց թխելը խմբային գործընթաց էր, և անձը միայնակ չէր կարող հաց թխել: Այն հանիդսանում էր բացառապես կանանց զբաղմունք, և խուսափում էին, որ հաց թխելու ընթացքում թոնրատուն տղամարդ մտնի, քանի որ դա համարում էին վատ նշան: Այս խմբային գործում բոլորի դերերը բաշխված էին, ամեն մարդ ուներ իր գործը մեկը խմորն էր պատրաստում, մյուսը գրտնակում էր, մյուսը, ով ամենափորձառուն էր, այն խփում էր թոնրի շուրթին: Ոչ փորձառուները հիմնականում փոխանցում էին խմորի գնդերը և այդ ընթացքում էլ սովորում ավելի փորձառուներից:

Հացի թխման արարողությունն ուներ 7 խորհուրդ ցորեն աղալը, ալյուր մաղելը, խմոր պատրաստելը, աղ լցնելը, գնդերի բաժանելը, թխելը և շարելը:

Հաց թխելու խաղերգ

Քուրիկ Զիզի, կայնի, խաղա, լե, լե, լե, աշե,

Քուրիկ Զիզի, նստի, խաղա, լե, լե, լե, աշե,

Քուրիկ Զիզի, թեշիկ մանի, լե, լե, լե, աշե,

Քուրիկ Զիզի, ալուր մաղի, լե, լե, լե, աշե,

Քուրիկ Զիզի, խմոր շաղի, լե, լե, լե, աշե,

Քուրիկ Զիզի, թոնիր վառի, լե, լե, լե, աշե,

Քուրիկ Զիզի, հացը թխի, լե, լե, լե, աշե:

Գունդ անեմ, գունդ անեմ, գունդ անեմ,

Տապ անեմ, ալուր ցանեմ, տապ անեմ, տապ անեմ,

Գունդ բացեմ, գունդ բացեմ, գունդ քցեմ, գունդ քցեմ,

Բատատին քցեմ, թոնրին խփեմ, հաց հանեմ, հաց հանեմ:

Գունդ անեմ, գունդ անեմ, գունդ անեմ:

Թիվ 1 Բողբոջ մանկապարտեզի ավագ խմբի սաները ծրագրին համապատասխան ունեցան պարապմունք «Ինչպես հացը հասավ մեզ» թեմայով: Պարապմունքի ընթացքում մեր խոհարարը հնարավորինս պարզ ձևով ներկայացրեց հացի ստեղծման գործընթացը:

Երեխաները ոգևորված էին

Ազգային ծեսի՝ <<Հացթխիկի>> կազմակերպումը կրթական համալիրում, երեխաների մոտ ամրապնդելու նպատակով նույն ոգևորությամբ նպատակային էքսկուրսիա ունեցան հացի գործարան և լիարժեք ականատես եղան լավաշի թխմանը: Վերջում հացի գովերգման երգով համտեսեցին տաք լավաշը: Երեխաները գործնականորեն տեսնելով հացի թխման պրոցեսը, լիարժեք պատկերացրեցին հացաթխման տեխնոլոգիան: Նրանք կարողացան բանավոր կերպով ներկայացնել՝ ցանքսից մինչև հաց թխելու պահը:

Եզրակացություն

Այսպիսով, որպես դաստիարակ կարևորում եմ երեխաների հայեցի դաստիարակությունը և նրանց մասնակցությունը ազգային տոների, ծեսերի կազմակերպման գործընթացում, ինչպես նաև ծնողների ներգրավվածությունը ծեսերի և միջոցառումների ժամանակ: Որի արդյունքում ձևավորվում և զարգանում է

- Միասնականություն
- Համախմբվածություն
- Վստահության բարձրացում մանկապարտեզում կազմակերպված աշխատանքների նկատմամբ
- Միջանձնային և ներանձնային հարաբերությունների զարգացում
- Ընտանիք-մանկապարտեզ կապի ամրապնդում
- Երեխաների բանավոր կապակցված խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում
- Ազգային ծեսերի, տոների վերականգնումը և նախադպրոցական ուսումնական հաստատությունում այն կիրառելը ունի մի շարք դրական կողմեր
- Երեխայի մեջ արմատավորել ազգային ավանդույթներ, տոներ, ծեսեր
- Ամրակցել երեխաների գիտելիքները՝ ծիսական երգերի, խաղիկների և խաղերգերի մասին

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս.Ս.Մկրտչյան- Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ հավատալիքներ ավանդույթ և արդիականություն, Երևան Գասպրինտ հրատարակչություն 2010թ., էջ 192
2. Լալա Սմբատյան- Նախաշավիղ 2010.5, էջ 63
3. Լալա Սմբատյան- Տոնական ղողանջներ, Երևան 2011թ., էջ 256
4. Սուրեն Արք. Գաթարոյեան- Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս 2014թ., էջ 356
5. https://rimarstakyan.wordpress.com
6. https://www.marinemkrtchyan.wordpress.com
7. https://www.armgeo.am/ancient-armenian-holidays/